

ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ՏՈՆ

Հայաստանի ազգային գրադարանի թամանյանական մասնաշենքի մեծ ցուցասրահում փոքրիկ պտույտը հնարավորություն կտա ծանոթանալու հայ գրողների գործերի թարգմանություններին՝ 1800-ական թվականներից մինչև մեր օրեր: Ներկայացված են Գոշի, Այգեկցու, Քուչակի ստեղծագործություններից մինչև Գրիգի ու Նարինե Աբգարյանի ամենավերջին հրատարակությունները: Անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն, ռուսերեն, հոլանդերեն, արաբերեն, թուրքերեն, ուկրաիներեն... ցուցափեղկերի տակ կարելի է գտնել հայ գրողների այս եւ էլի շատ օտարալեզու թարգմանություններ:



«Այս ցուցադրությունը բացահայտում էր անձամբ ինձ համար, վստահ եմ՝ բոլորիդ համար բացահայտում կլինի իմանալը, թե հայ հեղինակներն ինչ լեզուներով են թարգմանվել: Ես հաճելիորեն զարմացած եմ, որ ունենք, օրինա, Շահան Շահնուր՝ անգլերեն: Թեև դա զարմանալի չի, քանի որ «Հազար ու մեկ վեպ, որ պետք է կարդալ» ամերիկյան գրական տեղեկատուի մեջ տեղ գտած միակ հայալեզու գիրքը Շահնուրի «Նահանջը առանց երգի»-ն է»,- թարգմանչած տոնի առիթով կազմակերպված ցուցադրության բացման խոսքում նշեց գրադարանի տնօրեն Հրայր Սարիբեկյանը՝ ընդգծելով, որ հաջորդ տարի թարգմանական գրականության ցուցադրությունը ավելի հարուստ կլինի, քանի որ գրադարանի Գրքի հանրահռչակման բաժինը իրականացնում

Է «Հայ գրականությունը թարգմանություններում» ծրագիրը, որի շրջանակում ժամանակակից գրականության բազմաթիվ նմուշներ լույս կընծայվեն տարբեր լեզուներով:

«Շվեդական մի հրատարակչություն, օրինակ, պատրաստվում է Րաֆֆու «Խաչագողի հիշատակարանը» հրատարակել, կանադական մի հրատարակչություն կհրատարակի Կոմիտասի նամակները, Թումանյանի հեքիաթները գերմաներեն լույս տեսնելուց հետո կհրատարակվեն նաև հոլանդերեն... Շատ կարևոր է, թե ինչ է թարգմանվում, և ես կարծում եմ, որ կարևոր է ներկայացնել այն հեղինակներին, որոնք եվրոպական գրականության մեջ բացարձակ արժեք են ներկայացում: Այսպիսով մենք հայ գրականությունը շատ ավելի ճանաչելի կդարձնենք ամբողջ աշխարհում», - կարևորեց Հրաչյա Սարիբեկյանը:

Ցուցահանդեսի բացմանը ներկա էր նաև Հայաստանի գրողների միության քարտուղար Պետրոս Դեմիրճյանը:



«Գրողների միության նախաձեռնությամբ հոկտեմբերի 10-15-ին անցկացվում է «Թարգմանչաց տոն» միջազգային գրական փառատոնը, որի նպատակը հայ գրականության թարգմանությունն ու տարածումը խթանելն է և միջազգայնորեն առավել ճանաչելի դարձնելը: Այս օրերին հանրապետությունում անցկացվող բազմաթիվ

միջոցառումների շարքում կարևոր է նաև Ազգային գրադարանի այս միջոցառումը: Ցուցադրությանը ներկայացված օրինակները վկայում են, որ մենք թարգմանական հարուստ ավանդույթներ ունենք: Ճիշտ է, դեռևս Հովհաննես Թումանյանն էր ասում, որ մենք լավ չենք ներկայացնում մեր գրականությունը, մեր մեծ տաղանդներին դրսում լավ չեն ճանաչում, բայց մեր գրականության միջազգայնորեն ճանաչմանը միտված քայլեր արդեն ավելի շատ են արվում: Այս ավանդույթը պիտի շարունակվի, քանի որ նմանատիպ ցուցադրություններն ամենախոսուն լրացումներն են ցանկացած թեմայի»,- ցուցադրության առիթով շնորհավորելով գրադարանին՝ նշեց Պետրոս Դեմիրճյանը:

Ցուցադրությանը հաջորդեց մանկավարժ, թարգմանիչ Արմինե Փիլոյան-Վրտեսկայի / Armine Piloyan Vrteska/ կազմած և նկարազարդած երկլեզու՝ հայերեն-մակեդոներեն «Այբբենարանի» և «Հայերենի աշխատանքային տետր»-ի շնորհանդեսը: Նոր տիպի այս դասագրքերը նախատեսված են Մակեդոնիայի հայ համայնքի ներկայացուցիչների, հայկական կիրակնօրյա դպրոցում սովորողների համար, որտեղ դասավանդում է հեղինակը: Արմինե Փիլոյան-Վրտեսկան նշեց, որ Ազգային գրադարանի այբբենարանների հարուստ հավաքածուի ցուցադրությունից ոգեշնչված՝ որոշել է իր հեղինակած այբբենարանը գրադարանին նվիրել՝ հավաքածուն համալրելով ժամանակակից, ոչ դասական երկլեզու նմուշով:

Թարգմանչուհին Ազգային գրադարանին նվիրեց նաև իր մակեդոներենից հայերեն թարգմանած Բլաժե Մինսկու «Նշանը» և Դեյան Տրայկոսկու «Դավաճանությունը» գրքերը:

Շնորհանդեսի ընթացքում ելույթ ունեցողները կարևորեցին հեղինակի մեծ ավանդը, ջանքերը Սփյուռքի հայապահպանության գործում: Գրականագետ, «Անտարես»

հրատարակչության գլխավոր խմբագիր Արքմենիկ Նիկողոսյանը անդրադարձավ



Արմինե Փիլոյան-Վրտեսկայի մակեդոներենից հայերեն թարգմանած գրքերին՝ քարձր գնահատելով հեղինակի թարգմանական տաղանդը և ընդգծեց, որ Արմինեն շատ կարևոր դեր ունի ունի երկու երկրների մշակութային և գրական մերձեցման գործում. «Ահա թե ինչ կարող է անել մեկ անձը հայրենիքից հեռու՝ երկու ժողովուրդների համար»,- նշեց Արքմենիկ Նիկողոսյանը: